ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՈԳՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

13 ապրիլի 2010թ. N:3 գյուղ Գոգհովիտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՈԳՀՈՎԻՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով եվ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2010 թվականի մարտի 17-ի N:01/17/1538-10-Ա հանձնարարականի 2-րդ կետում նշված պահանջները

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գոգհովիտի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը համաձայն N:3 հավելվածի:

2.ՈՒժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գոգհովիտի գյուղական համայնքի ղեկավարի 2009թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գոգհովիտի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» որոշման թիվ 1 հավելվածը:

ՀՀ Շիրակի մարզի Գոգհովիտ
համայնքի ղեկավար՝ Ա. Մանուկյան